

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍՈՒՔԻԱՅԱՆ ՌՈԲԵՐՏ ԱՐՄԵՆԻ

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ (ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
Դեմոյան Հ. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հայրունի Ա. Ն.
պատմական գիտությունների թեկնածու
Գրիգորյան Հ. Գ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հուլիսի 30-ին՝ ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. հունիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Մուրադյան Հ. Ղ.

ԱՆԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Հայոց ցեղասպանության և մասնավորապես ոճրագործության ընթացքում տեղ գտած հանցավոր տեղահանությունների խնդրի գիտական ուսումնասիրությունը, բացառությամբ հատուկենտ դեպքերի, սկսվել է բավականին ուշ: Խորհրդահայ պատմագիտության մեջ մինչև 1965 թ. թեմայի արծարծումը որպես այդպիսին առհասարակ արգելված էր: Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցից հետո Խորհրդային Հայաստանում թեման դադարեց լինել արգելքի տակ, որի արդյունքում հրատարակվեցին խնդրին նվիրված որոշ ուսումնասիրություններ և արխիվային փաստաթղթեր¹: Անկախացումից ի վեր Հայոց ցեղասպանության հետազոտման հիմնական ուղղություններից են եղել եվրոպական դիվանագիտական, միսիոներական արխիվների², ինչպես նաև թուրքական մամուլի, արխիվային և իթթիհադականների դատավարությունների նյութերի շրջանառումը և հրատարակումը³: Սփյուռքում Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո և 20-րդ դարի կեսից, իսկ Հայաստանում անկախացումից հետո մեծ աշխատանքներ են տարվել խնդրի վերաբերյալ հուշագրությունների հավաքման և հրատարակման գործում⁴: Հայ և օտար մասնագետների կողմից

¹ Արտերկրում՝ Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշա: Պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրությամբ եւ բազմաթիւ պատկերներով*, Պոսթըն, հրատ. «Պահակ», 1921: Ահարոնեան Գ., *1915-1965. Յուշամարտան Մեծ Եղեռնի*, Պէյրուս, հրատ. «Զարթոնք» օրաթերթի, 1965: Գրիկեր, *Եղզլապի հայասպանութեան վտերագրական պատմությունը*, Նիւ Եորք, հրատ. «Ոսկետառ», 1980, Խորհրդային Հայաստանում՝ Нерсисян М.Г., Саакян Р.Г., *Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов*, Ереван, изд. АН АрмССР, 1966: Կիրակոսյան Զ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1915–1916 թթ.)*, Երևան, հրատ. «Հայաստան», 1965:

² Sarafian A., *United States official documents on the Armenian Genocide*, 3 vol., Watertown, Armenian Review, 1993: Օհանջանյան Ա., *1915 թվական անհերքելի վկայություններ: (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին)*, Երևան, ա. հ., 1997: Հայրունի Ա., *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը*, հրատ. «Նաիրի», Երևան, 2002:

³ Dadrian N. V., *Documentation of the Armenian Genocide In Turkish Sources*, Genocide: A Critical Review, Vol. 2 (Israel W. Charny, ed.), London, Mansell Publishing, New York, Facts on File, 1991, Տատրյան Վ., *Հայկական ցեղասպանությունը խորհրդարանական եւ պարմագիրական քննարկումներով*, Մասաչուսեթս, տպ. «Պայքար», 1995: Փափազյան Ա., *Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի*, Երևան, ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ, 1989:

⁴ Մեսրոպ Լ. խմբ., *1915. Աղէպ եւ Վերածնունդ*, Փարիզ, տպ. «Արաքս», 1952: Սվազյան Վ., *Հայոց ցեղասպանություն: Ականապես վերապրողների վկայություններ*, Երևան, ՀՀ ԳԱ

իրականացվել են ցեղասպանության աղբյուրագիտական հավաքման աշխատանքներ, իսկ կատարված ուսումնասիրությունների գերակշիռ մասը նվիրված են տեսական հիմնահարցերին: 1980-1990-ականների վերջերին հրապարակումների զգալի մասը պայմանավորված էր խնդրի՝ «ցեղասպանություն» որակման շուրջ առկա քաղաքական բանավեճով: Բանավեճի հիմնական առարկան եղել է օսմանյան կենտրոնական իշխանությունների, երիտթուրքական կուսակցության դերակատարման և հատուկ մտադրության խնդրի շուրջ: Արդյունքում գիտական շրջանակներում Հայոց ցեղասպանությունը անհերքելի փաստ է որակվել:

Սեբաստիայի տեղահանությունների ուսումնասիրումը կարևորվում է նաև դրանց տիպական նշանակությամբ, որոնք տարբերվում են մինչև «Տեղահանության մասին օրենքի» կիրառումը տեղ գտած և այլ հանգամանքներով պայմանավորված տեղահանություններից:

Փաստական հարուստ նյութի վրա տարածաշրջանային մոտեցումամբ (վարչատարածքային, մշակութային, տնտեսական կամ աշխարհագրական միավորով սահմանափակված) իրականացված ուսումնասիրությունները նախաձեռնվել են դեռևս ցեղասպանությանը անմիջապես հաջորդած ժամանակամիջոցում, սակայն առկա է նման ուսումնասիրությունների լրացման և ամբողջացման անհրաժեշտություն⁵: Ուստի հիմնվելով աղբյուրագիտական նորահայտ տվյալների վրա՝ անհրաժեշտ է կատարել Սեբաստիայի նահանգի հայ բնակչության դեպի Միջագետք տեղահանության պատմության ուսումնասիրությունը՝ կիրառելով տարածաշրջանային մոտեցում:

Հիմնահարցի ուսումնասիրության համառոտ պատմություն. Ըստ վարչատարածքային բաժանումների նախացեղասպանական փուլի և բուն ցեղասպանական գործողությունների համակարգային ներկայացման՝ թերևս առա-

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2000: Վիրաբյան Ա., Ավագյան Գ., *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու*, 3 հատ. , Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012:

⁵ Այս մոտեցումը իրականացված հետազոտությունների առաջին օրինակներից է 1919թ. հրատարակված Թովմաս Մկրտչյանի «Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները (Ականատեսի պատմութիւն)»-ը, որը հիմնվելով հեղինակի և այլ ականատեսների վկայությունների վրա՝ նկարագրում է Տիգրանակերտի հայ և ասորի ժողովուրդների դեմ իրականացված ցեղասպանական գործողությունները՝ Մկրտիչեան Թ., *Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները: (Ականատեսի պատմութիւն)*, Գահիրե, տպ. «Գրիգոր Ճիհանեան», 1919:

ջին փորձը Ս. Ակունիի «Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմությունը»⁶ աշխատությունն է, որը հենվում է Կ. Պոլսի պատրիարքարանի հավաքած վերապրողների վկայությունների և այլ փաստաթղթերի վրա: Այս մոտեցման շարունակությունը տեսնում ենք Սեբաստիայի և հարակից շրջաններին նվիրված հուշամատյաններում, որոնք ամփոփում են ազգագրական, պատմական, աշխարհագրական, լեզվական տեղեկություններ և ուսումնասիրություններ, հաճախ՝ ցեղասպանությանը նվիրված առանձին գրվածքներ: Դրանք ներառում են ոչ միայն առանձին վկայությունների հրատարակություններ, այլ նաև ցեղասպանական գործողությունների հանգամանալից վերլուծություններ: Այս մոտեցումը հետագայում որդեգրել և կիրառել է Ռ. Հովհաննիսյանը⁷ առանձին շրջաններին նվիրված ուսումնասիրություններում:

Վերջին տասնամյակներում տարածաշրջանային հետազոտության մոտեցմամբ իրականացված խիստ կարևոր աշխատություններից է Ռ. Գևորգյանի “*The Armenian Genocide. A Complete history*”-ը⁸: Վերջինս անդրադառնում է ամբողջ կայսրության տարածքում, այդ թվում՝ Սեբաստիայի նահանգում տեղի ունեցած իրադարձություններին՝ վերստին արդիականացնելով հայկական սկզբնաղբյուրների օգտագործման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Սեբաստիայի տեղահանություններին նվիրված ամենաընդգրկուն աշխատությունը Կ. Գաբրիելյանի 1924 թ. «Եղեռնապատումն» է: Սեբաստիայի տեղահանությունները ուղղակիորեն քննող մենագրություն մեզ հայտնի չէ: Խնդրի ուսումնասիրման համար մեծարժեք նշանակություն ունեցող հայկական բազմաթիվ սկզբնաղբյուրների ճնշող մեծամասնությունը մինչև այժմ դուրս է մնացել գիտական շրջանառությանից: Կարծում ենք, որ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության այս փուլում կարևորվում են այն հետազոտությունները, որոնք հիմնված են մինչ այժմ անտեսված հայկական սկզբնաղբյուրների հարուստ փաստական նյութի վրա:

Ժամանակագրական և աշխարհագրական սահմանները. Սույն աշխատանքը նվիրված է Սեբաստիայի նահանգից հայ բնակչության դեպի Միջագետք տեղահանության ուսումնասիրությանը: Աշխատանքի

⁶ Ակունի Ս. , *Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմությունը (1914-1918)*, Կ. Պոլիս, «Հայաստան» գրատան հրատ., 1921:

⁷ Hovannisian G. R. ed., *Armenian Sebastia, Sivas and Lesser Armenia*, Costa Mesa, CA, Mazda Publishers, 2004:

⁸ Kévorkian R., *The Armenian Genocide. A Complete history*, London, New York, I.B. TAURIS, 2011:

ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1914 թվականի վերջից մինչև 1915 թ. աշունն ընկած ժամանակահատվածը՝ ներառելով նախացեղասպանական շրջանից մինչև բուն ցեղասպանական գործողությունները:

Ատենախոսության մեթոդաբանական հենքը. Ատենախոսությունը շարադրվել է աղբյուրների համադրման, համեմատական, պատմաքննական, ինչպես նաև նկարագրողական մեթոդներով: Պատմաքննական և համեմատական մեթոդների միջոցով ներկայացվում են տեղահանություններին առնչվող պատմական դեպքերը, դրանց բնույթը, սահմանումները, բնորոշիչ առանձնահատկությունները: Դրանց միջոցով հնարավորինս ուրվագծվել է Սեբաստիայի տեղահանությունները:

Աղբյուրագիտական համադրության և նկարագրողական մեթոդի կիրառմամբ կատարվել է մեզ հասանելի նյութերի մեկտեղում: Դրանց միջոցով նկարագրվել են տեղահանությունների նախապատրաստական փուլերը, գործադրումն ու հետևանքները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակը Հայոց ցեղասպանության ընթացքում Սեբաստիա նահանգի հայ բնակչության տեղահանությունների համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է: Ըստ այդմ՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ա) ներկայացնել մինչ Առաջին համաշխարհային պատերազմը սեբաստահայության սոցիալ-տնտեսական վիճակը,
- բ) վեր հանել տեղահանությունների՝ որպես բնաջնջման քաղաքականության կիրառության հիմնական բնորոշիչները,
- գ) ուրվագծել սեբաստահայերի դեմ իրագործված կենտրոնական և տեղական իշխանությունների մինչպատերազմյան քաղաքականությունը,
- դ) ի ցույց դնել տեղահանության պայմանները, գործադրման եղանակներն ու տրամաբանությունը,
- ե) վեր հանել ցեղասպանական բնույթի տեղահանությունների իրականացման եղանակները,
- զ) ուսումնասիրել տեղահանությունների ընթացքում կատարված հարստահարման եղանակները,
- է) ուսումնասիրել տեղահանության ընթացքում երեխաների, կանանց և աղջիկների հափշտակումների և կրոնափոխության հարցերը,
- ը) տեղորոշել տեղահանության երթուղիների երկայնքով տեղակայված հատուկ նշանակության հիմնական անցումային կայանները, բացահայտել նշված

վայրերում իրականացված համակարգային հանցագործությունները և նպատակները,

թ) ամփոփել սեքսատահայության տեղահանության հետևանքները:

Ատենախոսության գիտական նորույթը. Ձևակերպվել են տեղահանությունների համատեքստում իրականացված հանցագործությունների տեսական բնորոշումները, որոնք համադրվել են տեղահանությունների այլ դեպքերի հետ: Ուսումնասիրվել են բազմաթիվ հայկական և օսմանյան արխիվային փաստաթղթեր (ՀԱԱ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ՀՅԹԻ, ԳԱԹ, Թուրքիայի պետական և Փարիզի Նուբարյան արխիվ և այլն), վերապրողների անտիպ հուշեր և հուշերի հավաքածուներ (այդ թվում՝ մամուլում տպագրված հուշեր և հետազոտություններ): Վերջիններս համադրվել են տարբեր աղբյուրներից քաղված տեղեկությունների հետ, որոնց հիման վրա ներկայացվել են Սեքսատիա նահանգի և հարակից շրջանների հայության ցեղասպանական բնույթի տեղահանությունները, դրանց նախորդող քաղաքականությունը, կազմակերպման և գործադրման եղանակները և դրանց հետևանքները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը. Այս աշխատությունն ունի գիտական և գործնական-կիրառական նշանակություն, մասնավորապես հետազոտության մեջ ներկայացված դրույթները կարող են իրենց կիրառությունը գտնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և այլ ցեղասպանությունների կանխարգելման գործում:

Քանի որ Սեքսատիայի նահանգը Ռուսական կայսրությանը սահմանակից չէր, Սեքսատիայում կատարված տեղահանությունները չեն կարող բացատրվել «հայերի դավաճանության» վարկածով: Այսպիսով՝ հետազոտությունը կարող է նաև ծառայել թուրքական ժխտողականության և քարոզչության այս թեզի դեմ: Կիլիկիայի պարագայում օգտագործվող ծովային սահմանով պայմանավորված օտար միջամտության և «դավաճանության» վարկածը, նույնպես չի բացատրում Սեքսատիայում տեղի ունեցած իրադարձությունները, քանի որ Սեքսատիան չուներ ծովային սահման: Աշխատանքը կարող է օգտակար լինել պատմաբանների, բուհերի ուսանողների, պատմական և ցեղասպանագիտական հետազոտություններ կատարողների համար, ինչպես նաև՝ ցեղասպանության, էթնիկ զտումների, այլ հանցագործությունների համատեքստում զանգվածային տեղահանությունների ու հանցավոր տեղահանությունների դեպքեր հետազոտողների համար:

Ատենախոսության փորձաքննությունը. Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել «Հայոց ցեղասպանության

թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրությունների բաժինը: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած վեց հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը. Ատենախոսությունը կազմված է նախաբանից, երեք գլուխներից և եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Նախաբանի մեջ նկարագրվում է ուսումնասիրության կատարման մեթոդը, արդիականությունը, նպատակը և խնդիրները, ինչպես նաև՝ աշխատանքի կիրառական նշանակությունը, հիմնահարցի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՏԵՍԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ: Գլխի նպատակն է սահմանել պետության կամ գերիշխող (դոմինանտ) խմբի կողմից տեղահանությունների կատարման քաղաքականությանն առնչվող հասկացություններն ու հիմնական խնդիրները: Նման տեղահանությունների օրինակով ցույց է տրվել տեղահանությունների հասարակական համատեքստն պատմական զարգացումը, դրանց ազդեցությունը տեղահանության քաղաքականության իրականացման վրա: Ներկայացվել է տեղահանություններին առնչվող իրավական կարգավորումների պատմական զարգացումը: Նշված գլխի կառուցվածքը և առանձնացված բնորոշիչները դիտարկել են որպես տեղահանությունների ուսումնասիրության համակարգման փորձ:

Ցեղասպանագիտական ուսումնասիրություններում առկա է տեղահանությունների գործընթացների սահմանման հայեցակարգման կամ տեսականացման խնդիր, որից էլ բխում է այդ երևույթի ուսումնասիրման անհրաժեշտությունը: Իրենց աշխարհագրությամբ ու ժամանակագրությամբ տարբերվող մի քանի տեղահանությունների պատմական քննությունը բացահայտում է դրանց միջև գոյություն ունեցող համակարգային մի շարք ընդհանրություններ (պետական համակարգի կիրառում, իրավական հիմքերի ստեղծում, երթուղու և վերջնակետերի նպատակային ընտրություն, տարագրյալների նկատմամբ բռնության կիրառում և այլն) ու տեղային առանձնահատկություններ: Այս համատեքստում հատկապես մեծ նշանակություն է ունեցել այն գործոնների վերացումը, որոնք ստեղծում էին փրկության հնարավորություն (չեզոք խումբ՝ հավանական փրկիչ խմբերից հեռու քարավանների անցկացում, ականատեսների բացառում, դիմադրության համար անհրաժեշտ պայմանների ու հնարավորությունների վերացում):

Տեղահանություններին առնչվող ազգային և միջազգային իրավական շրջանակների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ խնդրո առարկա հարցի առաջին կարգավորումները ի հայտ են եկել 19-րդ դարի երկրորդ կեսից:

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ. ՍԵՔԱՍՏԻԱՆ ՑԵՂԱՍՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ:

Այս գլխում ամփոփվել են 1914 թ. սկզբից մինչև 1915 թ. հունիս տևած թուրքական իշխանությունների կողմից սեքաստահայերի նկատմամբ կիրառված քաղաքականության և դրա հետևանքների ուսումնասիրությունը: Անդրադարձ է կատարվել 20-րդ դա-րասկզբին Սեքաստիայի հայության ժողովրդագրությանը և սոցիալ-տնտեսական վիճակին: Այս շրջանի իրադարձությունները, ըստ ժամանակագրական և բովանդակային բնույթի, բաժանվել են 5 պայմանական խմբերի՝ ա) Սեքաստիա նահանգի ժողովրդագրական և տնտեսական վիճակը, բ) տնտեսական ճնշումներ, գ) Սեքաստիայի հայությունը Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, դ) ցեղասպանական նախանշաններ, ե) ցեղասպանական գործողությունները բռնագաղթից առաջ: Առաջին խմբում ամփոփվել են 1914 թ. հունվար-մայիս ամիսներին Սեքաստիայի հայերի նկատմամբ կիրառված տնտեսական բնույթի ճնշումների քաղաքականության դրսևորումները՝ մասնավորապես հայապատկան ձեռնարկատիրությունների դեմ իրականացված բոյկոտը և շուկաների հրղեհումները: Այնուհետև գույքի առգրավման, հայ տղամարդկանց զորակոչի, հայ զինվորներին աշխատավորական ջոկատներ ուղարկելու օրինակներով քննվել են Առաջին աշխարհամարտի սկզբնական փուլում (1914 թ. աշուն) կառավարության կողմից սեքաստահայերի միջոցները պատերազմական նպատակներին ծառայեցնելու, ինչպես նաև հայերի ինքնապաշտպանական հնարավորությունները թուլացնելու փորձերը: Քննության առարկա են դարձել Սեքաստիայում գրանցված ցեղասպանական քաղաքականության այն նախանշանները, որոնք վեր են հանում թուրքական իշխանությունների հակահայկական ծրագրերի տրամադրությունները: Նահանգում հակահայկական լարվածությունների սրման համատեքստում ուսումնասիրվել է Սահակ վարդապետ Օդաբաշյանի դեմ կազմակերպված սպանությանը, թուրք զինվորների թունավորման գրպարտությանը, Էնվեր փաշայի Սեքաստիա կատարած այցին, Օսմանյան բանակի հայ զինվորների դասալքությանը և նահանգում տեղակայված զինված խմբերի ազդեցությանը: Գլխի եզրափակիչ հատվածում առանձնացվել է Սեքաստիայի տեղահանություններին նախորդած ցեղասպանական առաջին գործողությունների ուսումնասիրությունը՝ մտավորականության չեզոքացումը, հայերի զինաթափումն ու զանգվածային

բանտարկությունները: Գլխում անդրադարձ է կատարվում նաև Շապին Գարահիսարի ինքնապաշտպանությանը, որպես Սեբաստիայի ցեղասպանական գործողությունների դիմադրության աչքի ընկնող օրինակ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ: Այս գլխում ուսումնասիրվել է Սեբաստիայի հայության տարագրության պատմությունը՝ հիմնականում հիմնվելով վերապրողների հուշերի վրա, որոնք բացառիկ աղբյուրագիտական տեղեկություններ են հաղորդում ա) տեղահանության հայտարարման, բ) խմբերի տարագրության պատրաստման պայմանների, գ) հայ բնակչության գույքի բռնազավթման ու իրացման, դ) փրկության հնարավորությունների, ե) անցումային կայաններում տեղ գտած գործողությունների վերականգման, զ) փրկվելու ռազմավարության կամ առնվազն նախաձեռնած միջոցները հասկանալու տեսանկյունից: Քարավաններում տիրած հարաբերությունները, տարագրության կենցաղը, զոհ և ռճրագործ խմբերի միջև եղած հարաբերությունները վեր հանելու, ինչպես նաև բուն տարագրվածների ընկալումները հասկանալու համար հայկական աղբյուրների հաղորդած տեղեկությունները ունեն բացառիկ նշանակություն: Այսպիսով՝ տարագրությունը, մասնավորապես տարագրության նախնական փուլը և բուն ընթացքի՝ անցումային կայաններում տեղ գտած իրադարձությունների նկարագրությունը կատարվել է՝ առավելապես հիմնվելով հայկական սկզբնաղբյուրների տվյալների վրա, իսկ օսմանյան աղբյուրները օգտագործվել են միայն հանցագործությունների պատասխանատուներին ներկայացնելու նպատակով: Այս գլխում քննվող հարցերի ուսումնասիրության ժամանակագրական սահմանները ընդգրկում է 1915 թ. ամռան ամիսները՝ տեղահանության հայտարարումից մինչև տեղահանման նշանակված վայրեր հասնելու ժամանակամիջոցը:

Հաշվի առնելով տարագրության ենթակա բնակչության բազմաքանակությունը և տարագրության երթուղիների աշխարհագրությունը՝ ներկայացվել է միայն ընտրված մի քանի բնորոշիչ, որոշ դեպքերում՝ կոնկրետ գործառույթներ իրականացնող կայաններ, նպատակ ունենալով բացահայտել այս կայանների տեղադրման հաջորդականության տրամաբանությունը և այդ կայաններում տարագրյալներին ոչնչացնելու սկզբունքները: Ընտրված կայաններն են *Քյոթու խանը*, *Հասան Չելեբին*, *Հեքիմ խանը*, *Հասան Պարրիկը*, *Ֆոնջար* և *Գանլը Դերեն*:

Քյոթու խան կայանի հիմնական գործառույթը մինչև Սեբաստիայի սահմանն անցնելը տարագրյալներին ճանաչող և հայկական միջավայրին ծանոթ հանցա-

գործների միջոցով աչքի ընկնող հայերին առանձնացնելն ու սպանելն էր, ինչպես նաև երևելի հարուստ խավերին թալանելը:

Հասան Չելեբին չափահաս հայ տղամարդկանց բնաջնջման հիմնական կայանն էր:

Վեքիմ Խան և Հասան Պատրիկ կայանների հիմնական գործառույթներն էին կանանց, աղջիկների և երեխաների առևանգումը և քարավանների թալանը:

Ֆռնջլարի բռնագաղթյալները կյանքի համար քարավանների կուտակումների պատճառով առաջացած, կյանքի համար անհամատեղելի հիգիենիկ և բնակլիմայական պայմաններում քարավաններում, ոչնչանում էին նույնիսկ առանց միջամտության: Այստեղ, սակայն գործում էր նաև երեխաների զատման ընդգծված քաղաքականությունը. քարավաններից զատելով նրանց տանում էին թուրքական որբանոցներ կամ բնաջնջում էին: Ֆռնջլարում հազարավոր հայ մանուկներ որդեգրվել են տեղի թուրք և քուրդ բնակչության կողմից, որոնք, ըստ որոշ վկայությունների, երեխաներին շահագործում էին գյուղատնտեսական աշխատանքների մեջ: Որոշ կանայք կրոնափոխ են եղել և հաստատվել Մալաթիայում: Արձանագրվել են նաև կանանց և աղջիկների հափշտակման բազմաթիվ դեպքեր:

Կանանց Քարավանները կայանում մի քանի օր պահելուց հետո գործողությունները շարունակվում էին մոտակա Գանլը-Դերե կոչվող լեռներում (Մալաթիայից հարավ-արևելք ընկած հատվածում), որտեղ Ջեյնալ բեյի Հաջի Բեդրի աղայի ղեկավարությամբ ավարտին էր հասցվում մինչ այս փուլը տարբեր եղանակներով փրկված հայ տղամարդկանց ոչնչացումը, շարունակվում էին կանանց և երեխաների առևանգումն ու թալանը:

Առանձին անդադարձ է կատարվել տեղահանության ամբողջ ընթացքում տարագրյալների խմբերին ուղեկցող ժանդարմների հանցավոր գործունեությանը, որոնք իրենց վրա էին վերցնում ինչպես կայաններում, այնպես էլ միջկայանային հատվածներում ժողովրդի հյուծման և բնաջնջման գործառույթի իրականացումը:

Որպես բացառիկ հանգամանք՝ առանձին ներկայացվել է ամերիկացի միսոներուհի Մերի Գրեֆեմի գործունեությունը, ինչն ի ցույց է դնում տեղահանության ընթացքում օտար ականատեսի զսպիչ ազդեցությունը ոճրագործ խմբի վրա:

Մեքաստիայի տեղահանությունների համեմատական և պատմաքննական հետազոտության, աղբյուրների համադրման և վերլուծության միջոցով կատարված ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

- Տեղահանություններին առնչվող պատմական օրինակների դիտարկման միջոցով նկատվել է, որ դրանք տեղի են ունեցել թե՛ պատերազմական, թե՛ խաղաղ իրավիճակներում՝ ունենալով առանձին կամ զուգորդելի տնտեսական, քաղաքական, կրոնական նկատառումներ:
- Տեղահանությանը օրինական հիմք տալու նպատակով օսմանյան իշխանությունները 1914 թ. մայիսի 27-ին ընդունել են «Տեղահանության օրենքը», որով փորձ է արվել՝ օրինականացնելու ապօրինությունը, նպաստավոր պայմաններ ստեղծելու ամբողջ պետական համակարգը մոբիլիզացնելու և զոհ խմբի հավանական դիմադրությունը մեղմելու համար:
- Ինչպես Սեբաստիայի, այնպես էլ այլ հանցավոր տեղահանությունների դեպքում որպես տեղահանությունների երթուղիներ և վերջնակետեր ընտրվել են մահացության աստիճանը բարձրացնող, մարդու առողջությունը խոցելի դարձնող վայրերը: Այս վայրերում աքսորյալները զրկված էին տարրական կենսապայմաններից, իսկ դրանց առկայության պարագայում խստիվ արգելվել է դրանցից օգտվել: Այս վայրերը մեծ մասամբ եղել են խոշոր բնակավայրերից հեռու, ինչը հետապնդել է զոհ խմբի հավանական դիմադրությունը բացառելու կամ մեղմացնելու, ինչպես նաև հասանելի ռեսուրսների օգտագործումը կանխելու նպատակներ: Վերոնշյալ վայրերի ընտրությունը պայմանավորված էր նաև հնարավոր ականատեսների ներկայությունը կանխելու կամ նման դեպքերի քանակը նվազեցնելու, ինչպես նաև նրանց ներգրավումը և փրկիչ դառնալու հավանականությունը բացառելու նպատակով:
- Տեղահանությունը՝ որպես խմբի ոչնչացման մեթոդի ընտրություն, պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ այն իրենից չի ենթադրել մեծ ֆինանսատեխնիկական ռեսուրսների կիրառում: Երթերը ոչ միայն չեն եղել ծախսատար, այլև հակառակը եղել են հարստացման միջոց. ամբողջ ճանապարհին տարագրվածները ենթարկվել են հարստահարման ու թալանի:
- Դեռևս 1914 թ. հունվարից թուրքական իշխանությունները նպատակաուղղված թուլացրել են Սեբաստիայի հայերի տնտեսական կարողություններն ու ներուժը, ինչը հետագայում պետք է հեշտացներ հայերի բնաջնջման քաղաքականության իրականացումը: Այս գործողությունները նպաստել են թուրք բնակչության շրջանում այն համոզման տարածմանը, որ հայերն իրենց գործունեությամբ վնասում կամ սպառնում են թուրքական տարրի բարգավաճմանը:

- Առաջին համաշխարհային պատերազմի համատեքստում սկսվել է զորակոչը և հայկական զույքերի անհամաչափ և որոշ դեպքերում բռնի առգրավումը, ինչին փորձ է կատարվել տալու օրինական տեսք ու դնելու այդ գործողությունները իրավական գործընթացների ձևի մեջ: Զորակոչի ու առգրավումների միջոցով իշխանությունները ոչ միայն ամրապնդում էին կայսրության պատերազմական կարողությունները, այլև թուլացնում հայերի դիմադրողականությունը:
- Հայ զորակոչիկներին աշխատավորական ջոկատներ ուղարկելով՝ իշխանությունը հայ հասարակությունից մեկուսացնում էր դիմադրության ընդունակ տղամարդկանց, արդեն որպես զինվոր զինաթափում նրանց, շահագործում սեփական ռազմական և տնտեսական խնդիրները լուծելու համար և ոչնչացնում հյուժիչ աշխատանքի միջոցով:
- Սեբաստիա նահանգում նախացեղասպանական փուլի քաղաքական և գործնական պատրաստությունների շարքին են դասվում 1915 թ. սկզբին իրականացված Սահակ վարդապետ Օղաբաշյանի սպանությունը, թուրք զինվորների թունավորման գրպարտության դեպքն ու դրան առնչվող զարգացումները:
- Հայերի հանդեպ բացարձակ անվտանգության արտահայտումները, նրանց դեմ կիրառված հալածանքները, զինվորների զինաթափումը, տաժանակիր շինարարական աշխատանքների հանձնարարումը, զորանոցներում տարածված համաճարակներն ընդհանուր առմամբ այն հիմնական հանգամանքներն էին, որոնք կայսերական բանակում ծառայող հայ զինվորներին դրդում են դասալքության: Դասալիքներին փնտրելու պատրվակող խուզարկություններ էին իրականացվում հայերի տներում, որոնց ընթացքում բռնագրավվում էին նաև հայտնաբերված զենքերը:
- Մի կողմից, Առաջին համաշխարհային պատերազմում թուրքական կողմից ներգրավված զինվորների ներկայությունը Սեբաստիայի գյուղերում և դրանից բխող հասարակական լարումները, մյուս կողմից՝ ռուսական ռազմագերիների հանդեպ հայերի բարյացակամ վերաբերմունքը, չէր վրիպում նահանգի իշխանությունների ուշադրությունից և հավելյալ առիթ էր տալիս հայերի նկատմամբ կասկածամտության:
- 1915 թ. ապրիլի կեսից Սեբաստիայի հայերի զինաթափման և դասալիքների նկատմամբ կիրառվող պատժիչ գործողությունների միջոցով օսմանյան իշխանությունը չեզոքացնում էր հայերի հնարավոր դիմադրության համար խիստ

կարևոր երկու ռեսուրսները՝ մարտունակ տղամարդկանց և սպառազինությունը:

- 1915 թ. մարտ-ապրիլ ամիսներին կուսակցական գրասենյակների խուզարկությունների ու առգրավումների նպատակը դիմադրության ծրագրերը բացահայտելն ու դրանք վիժեցնելն էր, ժողովրդին առաջնորդներից զրկելը: Սա նաև պարարտ հող էր ստեղծում զինաթափմանը և զանգվածային ձերբակալություններին միտված գործողությունների համար:
- 1915 թ. հայերից զենքի բռնագրավումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով իշխանություններն օգտագործում էին բնակչության շրջանում հեղինակություն վայելող կառույցներին և անձանց:
- 1915 թ. մայիս-հունիս ամիսներին զանգվածային բանտարկությունների միջոցով չեզոքացվել են մինչ այդ կոտորածից կամ զորակոչից խուսափած տղամարդիկ: Նրանց խումբ-խումբ առանձնացնելով և գաղտնի սպանելով՝ իշխանությունները բացառեցին նախատեսված քսորի դեմ հնարավոր համակարգված դիմադրությունը: Սպանոն իրականացնելու նպատակով հարստանալու շահագրգռվածությամբ ներգրավվեց նաև մահմեդական բնակչությանը՝ մեթոդ, որը կիրառվեց ցեղասպանության նաև հաջորդ փուլում՝ տեղահանությունների ընթացքում:
- Այս ժամանակահատվածի իրադարձությունների համատեքստում առանձնահատուկ տեղ են գրավում Շապին Գարահիսար գավառի համանուն քաղաքի և շրջակա գյուղերի դեպքերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց այնտեղ են գրանցվել կազմակերպված դիմադրության հիմնական փորձերը, սակայն դրանք ճնշվել են, իսկ բնակչությանը՝ տարագրվել:
- Տեղահանության հայտարարության մեջ տարագրվողների համար երաշխավորվում էր փոխադրամիջոցների տրամադրումը և հսկողության տակ անվտանգ անցումը մինչև վերաբնակեցման վայրեր: Սակայն տեղահանությունների ընթացքում այս պարտավորությունները չեն կատարվել, իսկ կատարման դեպքում էլ, իրականացվել են մասնակիորեն:
- Տեղահանության ճանապարհներին տեղակայված են եղել անցումային կայաններ, որոնցից յուրաքանչյուրը կատարում էր գործողությունների հստակ շարք՝ ներառելով սպանություններ, մարդկանց հափշակություններ, տարատեսակ բռնություններ և թալան:
- Սեբաստիա և Խարբերդ նահանգների սահմանազխիսն տեղակայված Քյոթու խան կայանը առաջին խոշոր անցումային կայաններից էր, որտեղ գործում էր

ապահովագրական հանձնախումբ ներկայացող խումբը: Սա ոչ այլ ինչ էր, քան թալանի և սպանությունների համար ստեղծված ավագակախումբ: Այն կազմված էր կուսակցականներից, *Թեշքիլաթը մահսուսեի* անդամներից, բանտերից բաց թողնված հանցագործներից, տեղական իշխանության օղակներում ծառայող կամ դրանց առնչակից անձանցից: Կայանի հիմնական գործառույթներն էին զանգվածային թալանը և տղամարդկանց սպանությունը և հատկապես մինչ տեղահանությունը սպանությունից խուսափած վերնախավի ներկայացուցիչների ոչնչացումը:

- Հասան Չելեբի կայանում տեղ գտած հանցագործությունները նույնպես կազմակերպվել են քաղաքական, ինչպես նաև կրոնական բարձրագույն իշխանությունների ցուցումներով: Այս կայանում իրականացված գործողությունները բաժանվում են երեք համակարգված փուլերի: Ըստ այդ բաժանման՝ առաջին փուլի հիմնական նպատակը թալանը և կանանց նկատմամբ կիրառվող բռնություններն էին: Երկրորդ փուլում հայտնաբերվում և ձերբակալվում էին քարավանների անդամ տղամարդիկ: Երրորդ փուլը ներառում էր տղամարդկանց զանգվածային բանտարկություններն ու սպանողը: Կայանում իրականացված գործողությունների ծավալը, դրանց համակարգային բնույթն ու արդյունքները թույլ են տալիս պնդել, որ Հասան Չելեբին եղել է Սեբաստիա նահանգի և հարակից շրջանների չափահաս հայ տղամարդկանց սպանողի հիմնական կայանը: Կայանի գործունեության մեջ ներգրավվել են նաև տեղի քուրդ բնակիչները, ինչը դյուրացրել է քարավանների ոչնչացման գործընթացը և նվազեցրել սպանությունների նյութատեխնիկական ծախսերը:
- Հասան Չելեբիի և Մալաթիա քաղաքի միջև ընկած Հեքիմ խան և Հասան Պատրիկ կայաններում տեղի ունեցած դեպքերի մասին մեզ հասանելի են կցկտուր վկայություններ, սակայն հիմնվելով անգամ առկա նյութերի վրա՝ կարող ենք նշել, որ ինչպես այլ, այնպես այս կայանի կազմակերպչական և հանցավոր գործառույթները իրականացվել են պետական բարձր պաշտոնյաների և տեղի թուրք և քուրդ բնակչության ներգրավվածությամբ: Կայանի հիմնական գործառույթներից են եղել մինչ այս սպանությունից խուսափած տղամարդկանց ոչնչացումը, կանանց ու աղջիկների առևանգումները և թալանը:
- Մալաթիա քաղաքից հարավ ընկած Ֆոնջլարի դաշտը և հարակից լեռնային հատվածները՝ Գանլը-Դերե կոչվող լեռները, *Թաշքիլաթ*-ը *Մահսուսե*-ի զանգվածային ոչնչացման կենտրոններից են եղել: Այս կայաններում տեղ

գտած հանցագործությունների հիմնական պատասխանատուներն էին Դերսիմի պատգամավոր Հաջի Բալոշզադեի Մեհմեդ Նուրին, Ալի փաշան, Ռեշվան քուրդ ցեղից Ջեյնալ բեյը, Հաջի Բեդրի աղան, Բաղեշի ժանդարմերիայի սպա Էմինը և Հայրար բեկը: Այստեղ նույնպես բնաջնջման քաղաքականությունը գործադրվել է ներկայացուցչական, վարչական և այլ պաշտոնյաների կողմից՝ ներգրավվելով տեղի քուրդ ցեղերին և ցեղապետերին: Տեղահանության երթուղու այս հատվածը հատման կետ էր ավելի քանի կես միլիոն տարագրյալների համար:

Քարավանների քանակի, ջրի բացակայության, տարագրվածների հյուծվածության, կայանի սանիտարահիգիենիկ և այլ կենսապայմանների բացակայության հետևանքով հազարավոր տարագրյալներ, հատկապես առավել խոցելիները (մանուկները և ծերերը), կնքեցին իրենց մահկանացուն: Կայանում կատարվում էին նաև երեխաների, աղջիկների և կանանց հափշտակություններ: Հայ մանուկներից շատերը տեղափոխվեցին Մալաթիայի թուրքական մանկատուն: Այս կետում կառավարությունը հետ է վերցրել տրամադրված փոխադրամիջոցները, ինչի հետևանքով շատերը չեն կարողացել այլևս շարունակել ճանապարհը և հյուծվածությունից մահացել են կամ սպանվել: Ֆոնջլարի դաշտից հետո արդեն քարավանները անցել են դեպի Գանլը-Դերեի լեռնային կայան, որտեղ պատասխանատուները դրսևորել են տղամարդկանց ոչնչացման հատուկ գործելակերպ և ուշադրություն է դարձվել կանանց հագուստով ծալված տղամարդկանց բացահայտմանը: Այն եղել է կանանց և աղջիկների հափշտակումների և քարավանների զանգվածային թալանի հիմնական կետերից մեկը:

- Տարագրյալների երթերը առաջնորդում էին կառավարության կողմից նշանակված զինված ժանդարմները, որոնք, ըստ տեղահանության մասին օրենքի, պարտավոր էին ապահովել աքսորյալների անվտանգ անցումը տեղահանության վերջնակետեր: Սակայն, հայերի տեղահանությունների ընթացքում ժանդարմները դարձան ցեղասպանական գործողությունների հիմնական դերակատարներից: Տեղահանության տեղային իրադարձությունների նկարագրությունները փաստում են, որ ժանդարմները ոչ միայն իրականացրել են բազմատեսակ բռնություններ, թալան, առևանգումներ, այլև՝ շատ դեպքերում, օրինակ՝ քրդական հարձակումների ընթացքում մատնված են եղել հանցավոր անգործության: Ուսումնասիրելով աքսորյալների քարավանների ընթացքը, նրանց հանդեպ ժանդարմների դրսևորած վերաբերմունքը և քրդա-

կան հարձակումների ժամանակ նրանց անգործությունը՝ ցույց են տալիս, որ վերը նկարագրված գործողությունների համատեքստում ժանդարմների և ավազակախմբերի շահերը առնվազն համընկել են:

- Քարավաններից մեկում օտար ականատեսի՝ միսիոներ Մերի Գրեֆեմի, ներկայությունը քարավանում ունեցել է զսպիչ ազդեցություն, ինչը հստակորեն երևում է իր և այլ քարավաններից վերապրածների վկայությունների համեմատության մեջ: Միսիոների ներկայության զսպիչ ազդեցությունը չեզոքացնելու համար նրան ստիպողաբար հետ են ուղարկել Սեբաստիա քաղաք:
- Հիմնվելով մեզ հասանելի վիճակագրական տվյալների վրա՝ կարելի է տեսնել, որ որպես տեղահանություն ներկայացվող տարագրումը իրականում հանգեցրել է սեբաստահայերի բնաջնջմանը, ինչը «տեղահանությունը հավասար է բնաջնջում» բանաձևի ակնհայտ դրսևորումն է:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Քյոթու Խան. Սեբաստիայի տեղահանության ճանապարհի մի կայանի շուրջ, «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2018, №6 (1), էջ 44-61:
2. Հասան Չելեբի. Սեբաստիայի տեղահանության ճանապարհի մի կայանի շուրջ, «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2018, №6 (2), 2018, էջ 53-69:
3. Նուբարյան գրադարանի թղթապանակը Սեբաստիայի կոտորածների ու տեղահանությունների վերաբերյալ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2019, №1 (655), Հունվար-ապրիլ, էջ 46-58:
4. Սահակ վարդապետ Օդաբաշյանի սպանությունը օսմանյան և հայկական աղբյուրների լույսի տակ, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 2019, էջ 455-470:
5. Սեբաստիայի հայության դեմ կիրառված պետական տնտեսական քաղաքականությունը 1913-1915 թթ., «Գիտական Արցախ», Երևան, 2019, №1 (2), էջ 436-444:
6. 1915 թ. Սեբաստիայի տեղահանությունները. տեսական ակնարկ, «Էջմիածին», Էջմիածին, 2019, Մարտ, էջ 124-138:

СУКИАСЯН РОБЕРТ АРМЕНОВИЧ

**МЕТОДЫ И ПРОЦЕСС ПЕРЕСЕЛЕНИЯ АРМЯНСКОГО НОСЕЛЕНИЯ В
ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (НА ПРИМЕРЕ ОБЛАСТИ СЕБАСТИЯ)**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 30-го июля, 2019 г. в 14⁰⁰, на заседании специализированного совета Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Основной целью диссертации является всестороннее изучение депортаций армянского населения Себастиийского региона в Османскую империю. Для этого были применены методы комбинирования источников и сравнительных исследований. Хронологические рамки исследования охватывают период с конца 1914 по осень 1915 года, начиная с до-геноцидальных фаз и заканчивая геноцидальными депортациями. В исследовании проблематизируется социально-экономическое положение армян Себастии на заре Первой мировой войны; особенности депортаций как средства политики уничтожения; правовые основы депортаций, условия депортации, способы их осуществления, лежащая в их основе логика и ее геноцидальный характер; антиармянская политика центральных и местных властей; способы грабежей, имевших место во время депортаций; похищения детей и женщин; случаи насильственной смены религии; а также переходные станции, расположенные вдоль маршрута депортаций и системных преступлений, совершенных на этих станциях.

В диссертации определены понятия и основные проблемы, связанные с депортационной политикой. Исследование раскрывает социальный контекст депортаций, их историческую динамику, количество сходств, присутствующих во время депортаций, различающихся во времени и географии, таких как вовлечение государственного аппарата, создание правовых основ, целенаправленный выбор маршрута депортации, и насилие в отношении депортированных. Кроме того, исследование демонстрирует историческое развитие нормативно-правовой базы по вопросам депортации.

События января-мая 1914 года делятся на пять условных групп: а) демографическая и экономическая ситуация в Себастии; б) экономические

репрессии; в) армяне Себастии на заре Первой мировой войны; г) признаки геноцида; д) геноцидальные действия, предшествовавшие депортациям. Исследование включает в себя проявления экономического угнетения, в частности бойкот армянских предприятий и их последующие поджоги. Далее обсуждаются усилия османских властей снизить шансы армянской стороны на самооборону, а также использовать армянские ресурсы для собственных военных целей. В ходе исследования выявлены признаки геноцидальных настроений турецких властей в Себастии, в частности, организованное убийство Саака Одабашяна, обвинения в отравлении турецких солдат, и визит в Себастию Энвера-паши. Начало геноцидального периода ознаменовано нейтрализацией интеллигенции, разоружением армян, массовыми арестами, и сопротивлением Шебинкарахисара, что явилось важным примером организованной обороны армянами Себастии.

Наконец, в диссертации исследуются события с момента объявлений о депортациях до прибытия в районы назначения летом 1915 года. История депортаций в Себастии построена на изучении воспоминаний выживших, в частности, проливающих свет на объявления о депортациях, условия подготовки групп к депортации, конфискацию имущества, принадлежащего армянам, возможности спасения и деятельность перевалочных пунктов. История депортаций дополняется османскими документами, в которых раскрываются лица, ответственные за совершенные в ходе процесса преступления.

Для целей данного исследования были выбраны следующие перевалочные пункты: Коту-хан, Хасан Челеби, Хекимхан, Хасанбадриг, Фырынджылар, Ганлы-Дере. Конкретные и системные обязанности каждого перевалочного пункта, методы грабежей, похищений и убийств были определены. В диссертации отдельно рассматривается преступная деятельность жандармов, сопровождавших караваны депортированных, и присутствие миссионера Мэри Греффем в качестве сдерживающего фактора для преступников.

Вывод исследования состоит в том, что депортации были не только одним из нескольких ключевых элементов уничтожения армян Себастиийского региона, но и главным средством осуществления геноцида. Депортации в случае Себастьянских армян были для них смертным приговором и стали причиной уничтожения большинства депортированных.

Sukiasyan Robert Armen

**METHODS AND THE PROCESS OF DEPORTATIONS OF ARMENIAN POPULATION
IN THE OTTOMAN EMPIRE (BASED ON THE CASE OF THE SEBASTIA PROVINCE)**

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of
“History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on July 30, 2019, at 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

The main goal of the thesis is the study and multifaceted examination of the deportations of the Armenian population of the Sebastia region in the Ottoman Empire. The methods of source combinations and comparative research were applied for this cause. The chronological scope of the research encompasses the period from late 1914 to the autumn of 1915, stretching from the pre-genocidal phases up to the genocidal deportations. The research problematizes the socio-economic condition of the Armenians of Sebastia at the dawn of the First World War; the peculiarities of deportations as a mean of annihilation policy; the legal frameworks of deportations, the conditions of deportation, modes of their implementation, the underlying logic and its genocidal nature; the anti-Armenian policy of central and local authorities; the modes of lootings that took place during deportations; the abduction of children and women; the cases of forced changes of religion; as well as the transitional stations located along the route of deportations and systemic crimes committed in those stations.

This thesis identifies the concepts and main problems regarding deportation policies. It reveals the social context of the deportations, their historical dynamics, the number of similarities present during the deportations varying in time and geography, such as the involvement of state apparatus, creation of legal foundations, targeted selection of deportation route and violence against the deportees. Moreover, the research demonstrates the historical development of the legal frameworks addressing the issue of deportations.

The events of 1914, January-May, period are divided into five nominal groups: a) the demographic and the economic situation in Sebastia, b) economic oppressions, c) the Armenians of Sebastia at the dawn of the First World War, d) the genocidal signs, e) the

genocidal actions preceding the deportations. The research encompasses the manifestations of economic oppression, particularly the boycott of the Armenian enterprises and their consequent arsons. Later on, the efforts of Ottoman authorities to reduce the chances of self-defense from the Armenian side and exploit the Armenian resources for their own military objectives are discussed. The signs indicating the genocidal attitudes of the Turkish authorities in Sebastia, among others, the organized assassination of Sahak Odabashyan, allegations of the poisoning of Turkish soldiers and the visit of Enver Pasha to Sebastia are revealed. The start of the genocidal period is marked by the neutralization of the intellectuals, the disarmament of the Armenians, mass imprisonments and the self-defense of Şabinkarahisar, which, presented as a significant example of organized defense by the Armenians of Sebastia.

Lastly, the thesis scrutinizes the events between the announcement of deportations to the arrival at the designated destination areas in the summer of 1915. The examination of the survivors' testimonies constructs the history of Sebastia deportations, particularly shedding light on the announcement of deportations, the conditions of preparing groups to deportation, the confiscation of the property owned by the Armenians, the opportunities of salvation and the activities of transitional stations. The picture of the history of deportations is completed with the help of the Ottoman documents, that unfold the ones held responsible for the crimes carried out during the process.

For this study, the following transitional stations are selected: Kötü Han, Hasançeşlebi, Hekimhan, Hasanbadrig, Firincilar, Kanli Dere. The specific and systemic responsibilities of each section, the methods of looting, abduction, and killings are identified. The thesis offers a discussion of the criminal activities of the gendarmes accompanying the caravans of deportees and identifies the presence of missionary Mary Graffam as a restraining factor for perpetrators.

The study concludes that the deportations were not only one of the key elements of the annihilation of the Armenians of the Sebastia region but were the main means of the genocide. The deportations in the case of Sebastia Armenians were the death sentence for them and were the cause of the destruction of the majority of the deportees.